



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 21 » 07

2017թ.

N: 249-Կ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ, ԱԽՈՒՐՅԱՆ,
ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի, 144-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 59-Ա որոշման 1-ին կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի, Ախուրյան, Մարմաշեն համայնքների ղեկավարների և ավագանու անդամների ընտրությունները նշանակել 2017 թվականի նոյեմբերի 5-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 25-ից:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

